# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 15

17/07/2012

<<ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱԿԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.05.2012Թ.-Ի N 9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արարատի մարզպետի 21.05.2012թ.-ի N 1/14/1/2423.12 գրությունը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մխչյան համայնքի ավագանու 14/05/2012թ.-ի N9 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

<<հողամասի նկատմամբ>> բառերից հետո ավելացնել <<օրենքով սահմանված կարգով>> բառերը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
3. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՍԱՇԱ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԻՍԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 14

17/07/2012

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Զիջել ներքոհիշյալ քաղաքացիների գույքահարկը համապատասխանաբար.

Հովհաննես Հունանյան-14110 դրամ, Գեղամ Խաչատրյան -16310 դրամ, Արմեն Աբրահամյան -9260 դրամ,Համազասպ Թարվերդյան -8000 դրամ, Հայրապետ Մանասերյան -11100 դրամ, Գուրգեն Ֆահրադյան -6400 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
3. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՍԱՇԱ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԻՍԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 13

17/07/2012

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ <<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի դրույթներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մխչյան համայնքի սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի /7900.76 գծմ./ համակարգերը մինչև 2037 թ.-ի հուլիսի 1-ը ՀՀ Կառավարության 22.12.2011թ.-ի N 1851-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի անհատույց օգտագործման>> պայմանագրով հանձնել <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին:

2. Մխչյան համայնքի ղեկավար պարոն Իսաջանյանն՝ սահմանված կարգով ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել , սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
3. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ
4. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԻՍԱՋԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 12

17/07/2012

**ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 3 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մխչյան համայնքի 2012թ.-ի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի/11.01.02.51/ գործառնական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 1430000 /մեկ միլիոն չորս հարյուր երեսուն հազար/ դրամ և ավելացնել հետևյալ ծրագրերի հոդվածներին.

1.1 Կառավարման մարմնի պահպանում ծրագրի /01.01.01.51/ գործառնական դասակարգման 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին հատկացնել 200000 /երկու հարյուր հազար/ դրամ, իսկ նույն ծրագրի 4234 /տեղեկատվական ծառայություններ/ հոդվածին հատկացնել 100000 /հարյուր հազար / դրամ:

1.2 Մշակութային միջոցառումների իրականացման ծրագրի /08.02.04.51/ գործառնական դասակարգման 4239 հոդվածին հատկացնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

1.3 Կրթություն /այլ դասերին չպատկանող/ ծրագրի /09.08.01.51/ գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածին հատկացնել 230000 /երկու հարյուր երեսուն հազար/ դրամ:

1.4 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ծրագրի /01.03.03.51/ գործառնական դասակարգման 4216 /գույքի և սարքավորումների վարձակալություն/ հոդվածին հատկացնել 400000 /չորս հարյուր հազար/ դրամ:

2. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ծրագրի /01.03.03.51/ գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածից 70000 /յոթանասուն հազար/ դրամ պակասեցնել և հատկացնել գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման հետ ծրագրի /01.06.01.52/ գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին, <<Հայաստանի Համայնքների Միությանը>> ֆինանսական աջակցություն տալու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ

2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ

4. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԽՍԱՋԱՆՅԱՆ

*04200512*